

14.10.09

«Հրապարակ» օրաթերթ

[http://hraparak.am/hodvac.php?h\\_id=3633](http://hraparak.am/hodvac.php?h_id=3633)

[www.hraparak.am](http://www.hraparak.am)

## ՈՒՍԱՆՈՂԻՆ ՉԵՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ ՍՈՎՈՐԵԼ

Պետական բուհերը բողոքում են թափուր տեղերի առկայությունից եւ մեղադրում ոչ պետական բուհերին: Իսկ ոչ պետական բուհերն էլ բողոքում են պետության կողմից իրենց նկատմամբ քողարկված, իսկ առանձին դեպքերում անթաքույց խտրական վերաբերմունքից, ինչի արդյունքում անհավասար մրցակցություն է ստեղծվել:

Այս մասին մեր զրույցը «Ուրարտու» ոչ պետական համալսարանի ռեկտոր ՍԵՂՐԱԿ ՍԵՂՐԱԿՅԱՆԻ հետ:



*-Պրն Սեղրակյան, այսօր ո՞ւմ եք ձեզ մրցակից համարում:*

-Մենք չենք մրցակցում ինչ-որ մեկի հետ, այլ պայքարում ենք հանուն որակյալ կրթության, մրցակցում ենք, անկախ նրանից՝ պետությունն է նրա հիմնադիրը, թե մասնավորը՝ հիմնարար գիտելիքի վրա հիմնված կրթությունն տալու, ոչ թե միայն ավարտական փաստաթուղթ տալու համար: Մասնավորը պետք է տեսնի, թե պետական բուհն ինչն է վիճակի չէ կատարել, ու ինքը կատարի, այսինքն՝ ոչ թե պետականն ու մասնավորը պիտի հակադրվեն, այլ՝ համադրվեն: Սակայն, չգիտես ինչու, կրթության համակարգը դարձել է մրցակցային իրար վատաբանելու, փնովելու, իրար վրա ցեխ շարտելու հարցում, իրականում դա այդպես չպետք է լինի՝ ամբողջ աշխարհում մասնավոր կրթական համակարգն իր տեղն ու դերն ունի, պետականը՝ իրենը, բայց, ցավոք, Հայաստանում մասնավոր կրթական համակարգը թերագնահատվում է: Պետք չէ մոռանալ, որ աշխարհում մեծ ճանաչում ունեցող Օքսֆորդի, Հարվարդի, Քեմբրիջի համալսարանները նույնպես մասնավոր են: Ես, իհարկե, համեմատականներ չեմ ուզում անցկացնել, բայց մեր ձգտումը, մեր նշանակետը պետք է լինեն այդպիսի համալսարանները: Մենք այս իրականության մեջ ենք ապրում եւ գիտենք, թե ինչքան վատ, ինչքան կոռուպցիոն բաներ կան պետական

համակարգում՝ սկսած ընդունելության քննությունների կաշառքներից մինչև ուսումնական պրոցեսի կազմակերպումը:

***-Փորձենք համամատական անցկացնել պետական եւ ոչ պետական բուհերի կրթամակարդակների միջև:***

-Մեզ մոտ, իհարկե, ավելի բարձր է, քան պետական բուհերում: Ես ինքս 35 տարի աշխատել եմ Երեւանի պետական համալսարանում եւ լավ գիտեմ այնտեղ ինչ է կատարվում: Մեզ մոտ պրակտիկ գիտելիքներին մեծ տեղ է տրվում: Մա է պատճառը, որ մեր ուսանողները շատ դեպքերում առաջ են պետական բուհերի ուսանողներից: Ես, իհարկե, կուզենայի մեր ազգի պատիվ հանդիսացող ԵՊՀ-ն նույնպես մասնագետներ պատրաստեր, բայց, ցավոք, հիմա ունենք այն, ինչ ունենք: Մեր շատ բուհերում՝ հիմնականում պետականներում, հսկվում է միայն ընդունելությունը, իսկ ընդունվելուց հետո ոչ ոք ուսանողին չի պարտադրում սովորել, ուսանողը հետագայում առանց գիտելիքի անցնում է աշխատանքի:

***-Ձեզ չի խանգարում արմատացած այն կարծիքը, թե պետական բուհերն ավելի լավ կրթություն են ապահովում, ավելի ռեյտինգային են, քան ոչ պետականները:***

-Առաջներում դա մեզ խանգարում էր, իհարկե, բայց ուրախ եմ նշել, որ այդ սառույցն արդեն կամաց-կամաց կոտրվում է: Մեզ, իհարկե, խանգարում է նաեւ այն, որ մենք տարկետում չենք տրամադրում, ուսանողների մի մեծ քանակ բանակի վտանգից դիմում է պետական բուհ, որն իրեն տարկետում կտա, բայց պետք է դիտարկել այս երեւույթի դրական կողմը նաեւ, որ այստեղ դիմում է այն ուսանողը, որն իրոք ցանկանում է սովորել:

***-Իսկ բուհն ունի՞ ուսանողների քանակի պրոբլեմ, եւ որքանո՞վ է ձգնաժամն ազդել քանակի վրա:***

-Այսօր մեր համալսարանում ունենք այնքան ուսանող, որքան մեզ անհրաժեշտ է, եւ, ի դեպ, ցանկություն էլ չկա այդ քանակն ավելացնելու, քանի որ այս անձնակազմն արդեն թրծված է, իսկ համալրելու դեպքում կարող է աշխատանքի որակն ընկնել: Բացի այդ, մեր տարածքը նաեւ թույլ չի տա դա անել, քանի որ ես անձամբ կողմ եմ, որ նորմերը պահպանվեն, այլ ոչ թե՝ պետական բուհերի նման, զուգարաններն էլ լսարան սարքեն: Ուսանողին շնչելու օդ է հարկավոր, որը, ցավոք, շատ տեղերում չկա:

Ինչ վերաբերում է ձգնաժամին, ապա նրա ազդեցությունը, իհարկե, բավական զգալի է: Չնայաց դրան՝ ձգնաժամի պայմաններում մեր ուսանողների քանակը անցած տարվա համեմատ չի նվազել, քանի որ հնարավորին չափ մտնում ենք մեր ուսանողների դերի մեջ եւ ամեն կերպ

փորձում ենք նրանց բերթ թեթեւացնել՝ հատկապես վարձերի կրճատման եւ գեղջերի ճկուն համկարգի կիրառման միջոցով: Բացի այդ՝ անվճար շատ տեղեր ունենք, աղետի գոտու շատ ուսանողներ մեզ մոտ 5 տարի անվճար են սովորել, եւ պետության կողմից ոչ մի գումար մեզ չի տրվել: Երբ առաջարկում էին իրենց օգնությունը, եւ ասում էի՝ օգնություն հարկավոր չէ, միայն թե մի խանգարեք:

Մեր նպատակը գիտությունը զարգացնելն է, եւ կարող էի բազում բիզնեսներով զբաղվել, բայց եւ կրթության մարդ եմ եւ պատասխան եմ տալիս կրթության համար: Մենք նույնիսկ վնասով ենք աշխատում, քանզի եթե մեր նպատակը լինի գումար աշխատելը, ապա ոչնչի չենք հասնի: Գաղտնիք ասած չեմ լինի, որ շատ պետական բուհերում կադրեր են ընդունում, որոնք ինչ-որ մեկի բարեկամն են, ծանոթն են, ամբիոններ կան, որ ընտանիքներով են դասավանդում, մեզ մոտ դա բացառվում է: Եթե եւ բարեկամ բերեմ, որը թույլ մասնագետ է, եւ կտուժեմ, ուստի այդպիսի կոռուպցիոն բաներ մեզ մոտ չկան: Ինչքան էլ ասենք՝ կոռուպցիան վերացնել չենք կարող, քանի որ դա հենց դպրոցից, հետագայում բուհից է սկսվում, հովանավորչական երեւույթը մեզ մոտ խիստ արմատացած է, իսկ պետական բուհերում դրա դեմ կամ չեն կարող, կամ էլ չեն ուզում պայքարել:

**ԱՐԱՄ ԱՆՏԻՆՅԱՆ**